ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-75-51,
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 137-Ի

«21» հոկտեմբերի 2024

ՈՐՈՇՈՒՄ

«ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ՍՊԸ) (ՀՎՀՀ 05563416) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը՝ հետևյալ պատճառաբանություններով: Այսպես.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությունը:

«ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը, ինչպես նաև հաստատել և հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությունը:

Նույն թվականի սեպտեմբերի 26-ին «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում (2024 թվականի հոկտեմբերի 3-ը ներառյալ) Մասնակցի կողմից համակարգի միջոցով չի ներկայացվել հաստատված պայմանագիրը և պայմանագրի որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է հիմք ընդունել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը զրկել պայմանագիր կնքելու իրավունքից: Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է նաև «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (պայմանագիր չի կնքվում) համաձայն, հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Միաժամանակ, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2024 թվականի հոկտեմբերի 9-ին www.gnumner.am կայքում Պատվիրատուն հրապարակել է «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հայտարարելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերը շարադրված իրավանորմերը և փաստական հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությունը, ճանաչվելով «ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից, սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը և դրանով իսկ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ «բ» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊ ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ